



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մամուլի հաղորդագրություն

Ընթացիկ տարում շարունակվել է բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում սրտի անհետաձգելի վիրահատությունների՝ ոչ դեղապատ ստենդի տեղադրման՝ կյանք փրկող ծրագիրը: Ինչպես նախորդ, այնպես էլ այս տարի սուր ինֆարկտից գրանցված մահերի թիվը շուրջ 500-ով նվազել է: Փրկվել է 1371 մարդու կյանք: Պետպատվերի շրջանակում իրականացվել է 3.216 սրտի վիրահատություն, որից 167-ը՝ երեխաներ: Ընդհանուր առմամբ, 2016 թվականին պետպատվերի շրջանակում արձանագրվել է հիվանդանոցային բուժօգնության 321.580 դեպք, որից մոտ 86,5 հազարը՝ 0-18 տարեկան երեխաներ: Իրականացվել է «Շագանակագեղձի քաղցկեղի վաղ ախտորոշման սկրինինգային ծրագիր», որի շրջանակում 40-70 տարեկան շուրջ 2.200 տղամարդ անցել է շագանակագեղձի քաղցկեղի վաղ ախտորոշման սկրինինգ՝ ուրոլոգի խորհրդատվություն և հետազոտություններ: Նոյեմբեր-դեկտեմբերին 18-69 տարեկան բնակչության շրջանում իրականացվել է ԱՀԿ փուլային STEPS հետազոտությունը, որի նպատակն է ընտրանքային հետազոտության միջոցով հավաքագրել տվյալներ ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման ռիսկի գործոնների տարածվածության գնահատման համար, վերահսկել միտումները, մշակել կանխարգելման քաղաքականություն:

ՀՀ առողջապահության նախարարության առաջնահերթություններից մեկն էլ առողջ ապրելակերպի ռազմավարության իրագործումն է, ինչը սահմանում է կենսակերպի այն սկզբունքներն ու չափանիշները, որոնք ժամանակի ընթացքում պետք է ուղղորդեն բնակչությանը դեպի ճիշտ ապրելակերպ: Այս կապակցությամբ խորապես ուսումնասիրվել է եվրոպական մի շարք երկրներում հանրության շրջանում առողջ կենսակերպի ապահովման բաղադրիչները, դրանց հասնելու ճանապարհները:

ԱՄՆ կառավարության հետ համագործակցության շրջանակում 2016թ. շահագործման են հանձնվել **ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի** ռեֆերենս, ինչպես նաև Տավուշի և Շիրակի մարզային արդիականացված լաբորատորիաները: Դրանք հազեցվել են ժամանակակից սարքավորումներով, ներդրվել է որակի հսկողության համակարգ, մեծ թվով կադրեր վերապատրաստվել են միջազգային ժամանակակից մոտեցումներին և պահանջներին համապատասխան: Արագ արձագանքում ապահովելու նպատակով ձեռք են բերվել շարժական լաբորատորիաներ:

Տարածաշրջանում կարմրուկի և կարմրախտի էլիմինացման խոչընդոտների հաղթահարմանն ուղղված Հայաստանի Հանրապետության սահմանափակ միջոցների պայմաններում արդյունավետ և լավագույն գործելակերպը միջազգային համաժողովում այլ երկրներին ներկայացվել է որպես **օրինակելի փորձ**:

2016թ. ՀՀ ԱՆ առողջապահական պետական տեսչությունը հարուցել է 316 վարչական վարույթ, որից 64-ը՝ դիմում-բողոքների հիմքով: Արդյունքում կիրառվել է 13 մլն 300 հազար ՀՀ դրամի տուգանք, ՀՀ պետական բյուջե վճարվել է 6 մլն 250 հազար ՀՀ դրամ:

«Թեժ գիծ» ծառայությունը ստացել է 15.043 հեռախոսազանգ՝ 10%-ով ավելի, քան 2015թ.: Ստացված 248 բողոքի վերաբերյալ ուղարկվել են գրություններ Երևանի և մարզերի բժշկական կենտրոններ, հարուցվել են վարչական վարույթներ, բուժաշխատողների նկատմամբ կիրառվել են բանավոր զգուշացումներ, կարգապահական տույժեր:

Վերջին երեք ամսվա ընթացքում ՀՀ առողջապահության նախարարությանը հաջողվել է որոշակիորեն վեր հանել համակարգում առկա խնդիրները: Այդ նպատակով ստեղծվել է 4 աշխատանքային խումբ՝ Ծախսվող միջոցների ֆինանսական արդյունավետությունը գնահատող, Կառուցվածքային բարեփոխումների հանձնաժողով, Էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրման աշխատանքային խումբ, Բժշկական գործելակարգերի թարգմանությունը, տեղայնացումը և ներդրումն ապահովող աշխատանքային խումբ:

Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ պետական պատվերով բժշկական օգնության ծրագրերն իրականացնելիս բյուջեից հատկացվող միջոցները պետք է հնարավորինս արդյունավետ օգտագործվեն: Առողջապահական համակարգի արդյունավետությունը և ծառայությունների որակը բարձրացնելու համար առաջիկա 2 տարում նախատեսվում է իրականացնել փուլային քայլեր, այդ թվում՝ օրենսդրական բարեփոխումներ, մատուցվող բժշկական ծառայությունների գների վերանայում: Մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը մեծապես կնպաստի բյուջետային միջոցների փաստացի բաշխումից ծառայությունների գնման մոդելին անցումը: Բժշկական ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման և գնային քաղաքականության մշակման նպատակով կուժեղացվեն կիրառվող մեթոդաբանական և ակտուարավերլուծական մոտեցումները:

Այսպիսով՝ ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով 12 դժվարամատչելի ծառայությունների գները 30%-ով կրճատվել են՝ համապատասխանեցվելով շուկայում առկա համադրելի գների մակարդակին: Այդ ծառայությունները հասանելի կլինեն 30%-ով ավելի շահառուի:

Կատարված ակտուարական վերլուծությունների հիման վրա գնահատվել է ՀՀ ամբողջ բնակչությանը բժշկական հիմնական ծառայությունների ապահովման համար անհրաժեշտ ծախսերի մակարդակը:

Միասնական ստանդարտների ներդրման նպատակով ստեղծվել է 50 աշխատանքային մասնագիտացված և առանձին համակարգող խումբ: Արդեն իսկ 45 կլինիկական մասնագիտությունների ուղղությամբ տեղայնացվում են թարգմանված 10-12-ական կլինիկական ուղեցույցներ և գործելակարգեր: Գլխավոր մասնագետների խմբերն առաջընթաց են ապահովել հատկապես սրտաբանության, անզգայացման և ինտենսիվ թերապիայի, մանկական ուրոլոգիայի, մանկական օնկոհեմատոլոգիայի

ուղղությամբ: Մինչև 2017թ. հոկտեմբեր պատրաստ կլինի 200 ուղեցույց և 100 գործելակարգ:

Սկսվել է էլեկտրոնային առողջապահական (E-health) համակարգի ներդրման ծրագիրը: Հստակեցվել են շահառուների շրջանակը, պատասխանատու անձանց և աշխատանքների հանձնման ժամկետները: Համակարգը միացվել է ոստիկանության բնակչության պետական ռեգիստրին:

E-health համակարգին ինտեգրվել է նաև ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը», որն ապահովելու է Հայաստանում գրանցված դեղերի ցանկերի առցանց թարմացումը համակարգում:

Պատրաստվել են էլեկտրոնային առողջապահական համակարգում պետական պատվերի շրջանակներում իրականացվող գործառույթները նկարագրող ուսումնական տեսանյութեր, որոնք տեղադրված են ԱՆ պաշտոնական կայքում:

Ծրագրային իրավասությունների տրամադրման և բժշկական անձնակազմի ռեգիստրի ստեղծման նպատակով E-health համակարգ է ներմուծվել պետական պատվեր իրականացնող 470 (ողջ ծավալի 95%) բժշկական կազմակերպության աշխատողների վերաբերյալ տեղեկատվությունը (համակարգում արդեն իսկ մուտքագրված է ավելի քան 20 հազար օգտատիրոջ տվյալ):

Կառուցվածքային բարեփոխումների հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքում աշխատանքներ են տարվում նախարարության ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ներում և ՓԲԸ-ներում կրկնվող գործառույթների բացառման, ինչպես նաև կառուցվածքային, կադրային և նյութական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման նպատակով: 22 շինություն և 11 ծառայողական մարդատար ավտոմեքենա կփոխանցվի պետական գույքի կառավարման վարչությանը:

Ոլորտում իրականացված օպտիմալացման արդյունքում 2017թ. առողջապահական բյուջեի ծախսերը կտնտեսվեն 1.8 մլրդ դրամով: Այն կուղղվի սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված քաղաքացիների ամբուլատոր և ստացիոնար բժշկական ծառայությունների փոխհատուցմանը:

Ուշադրության կենտրոնում են առողջ սնուցման հարցերը, մասնավորապես աղի ու շաքարավազի չարաշահման, ալկոհոլի ու վնասակար սովորությունների, նստակյաց կենսակերպի հետևանքով հիվանդացության բարձր ցուցանիշների նվազեցմանն ուղղված քայլերը: Հանգամանալից մշակված և մի շարք բաղադրիչներով իրականացվելիք ծրագրերը հնարավորություն կտան առողջ ապրելակերպի սկզբունքների միջոցով կանխարգելել ոչ վարակիչ հիվանդությունների զարգացումն ու բարդությունները:

Համաշխարհային փորձն ապացուցում է, որ առողջ ապրելակերպի սկզբունքների սերմանման հարցում նշանակալից է զանգվածային լրատվամիջոցների դերը: